«ՄԱԿ-ի ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՆՔ ԸՆԴՈՒՆԵԼ»

ՀՀ ԿԳ նախարար Սերգո Երիցյանի գլխավորած պատվիրակությունը նոր է վերադարձել Լիտվայից: Անկասկած, մեզ հետաքրքրում է, թե նախկին ԽՍՀՄ, այսօր Եվրամիության անդամ երկիրն ինչպես է իրականացնում կրթական բարեփոխումները, ի՞նչ արդյունքների է հասել, եւ նրանց փորձը կարո՞ղ է արդյոք օգտակար լինել Հայաստանի համար: Մեր զրուցակիցն է ՀՀ կրթության եւ գիտության նախարար *ՍԵՐԳՈ ԵՐԻՑՅԱՆԸ:*

-Նախ սկսենք, թե ի՞նչ տպավորություններով եք վերադարձել Լիտվայից:

-Որեւէ երկրում գտնվելը հնարավորություն է ընձեռում կողքի հայացքով նայել քո երկրում իրականացվող կրթական (եւ ոչ միայն կրթական) բարեփոխումներին: Եվ պետք է ասել, որ կողքից նայելը եւ համեմատությունն կատարելը, ցավոք, մեր օգտին չի խոսում. առնվազն մի քանի տարի հետ ենք մնում Լիտվայից: Կրթական բարեփոխումներին առնչվող այն հարցերը (12-ամյա կրթության, ավագ դպրոցի դերի, կրեդիտային համակարգի ներդրման, երկաստիճան համակարգի առավելությունների, գիտական կոչումների միասնականության եւ այլն), որոնք մեզ մոտ հաճախ բուռն բանավեճեր են առաջացնում, այնտեղ արդեն տարակուսանքի առարկա չեն: Իհարկե, գուցե նրանք բարեփոխումներն իրականացրել են բանավիճելով, բայց բանավեճը եղել է ոչ թե այս կամ այն անցումը կատարելու վերաբերյալ, այլ կրել է բովանդակային բնույթ: Օրինակ, չեն բանավիճել՝ անցնե՞լ 12-ամյա կրթության, թե՞ ոչ, այլ բանավիճել են դրան անցնելու ձեւի, ժամանակացույցի վերաբերյալ: Այսինքն՝ չի քննարկվել՝ ի՞նչ անել, այլ քննարկվել է ինչպե՞ս անել հարցը: Ես ցանկանում եմ, որ մեր երկրում եւս քննարկումներն ընթանան բովանդակայինի վերաբերյալ, եւ վերջնական որոշում կայացնելիս հաշվի առնվեն մեր ազգայինը, մեր ես-ը: Կրթական յուրաքանչյուր բարեփոխում ազգային հենք ունի, եւ ոչ մի բան որեւէ մեկի կողմից պարտադրված չէ: Դրսից Հայաստանին նայելիս մենք նաեւ համոզվեցինք, որ կրթական բարեփոխումների ուղղությամբ իրականացրած մեր քայլերը ճիշտ են, պատճառաբանված ու ժամանակին համընթաց: Մենք, ի վերջո, ցանկանում ենք, որ Հայաստանում կրթություն ստացած ցանկացած պատանի, աղջիկ, երիտասարդ ունենա կրթության պատշաճ որակ ու լայնախոհություն, եւ նրա ստացած գիտելիքները քննություն բռնեն ոչ միայն Հայաստանում, այլեւ նրա սահմաններից դուրս: Եվ միեւնույն ժամանակ յուրաքանչյուր ուսուցիչ, դասախոս պատասխան տա իր աշակերտի, ուսանողի ստացած գիտելիքի համար:

-Իսկ այսօր այդպես չէ՞:

-Իհարկե, ոչ, ո՞վ է ուսուցչին կամ դասախոսին հարցնում իր սաների ցուցաբերած արդյունքի համար: Ա՛յ, երբ հիմնական ավարտական քննությունը կընդունի գիտելիքների գնահատման ու թեստավորման կենտրոնը, այդ դեպքում արդեն կգնահատվի թե՛ շրջանավարտի, թե՛ ուսուցչի աշխատանքը: Նման համակարգի փորձարկումն արդեն Գյումրիում կատարել ենք, եւ դա կարելի է հաջողված համարել: Բայց դեռեւս պետք է ճշտվեն քննությունների անցկացման մեխանիզմները, որպեսզի ապահովվեն դրանց օբյեկտիվությունը, հավաստիությունը: Փաստորեն, 2007-ին վերացնում ենք ընդունելության քննությունների գործող համակարգը՝ այն փոխարինելով ավարտական քննություններով, որոնք կլինեն նաեւ ընդունելության քննություններ: 12-ամյա կրթության անցնելը ենթադրում է նոր ծրագրեր, դասագրքեր, գնահատման նոր համակարգի, տեխնիկական հաղորդակցման միջոցների, տեխնոլոգիաների ներդրում, ուսուցիչների մասնագիտական վերապատրաստում: 2006-ին մեր դպրոցների կեսից ավելին կկիրառեն համակարգչային տեխնոլոգիաներ, 45-50 հազար ուսուցչից 15-20 հազարն արդեն վերապատրաստված կլինեն: Մենք դպրոցում քանակայինի խնդիրը լուծել ենք եւ այսօր լուծում ենք որակական խնդիրը:

-Դպրոցն ավարտելուց հետո գրեթե բոլորը ձգտում են բուհ ընդունվել...

-Մենք պետք է համամասնորեն զարգացնենք կրթական յուրաքանչյուր հատվածը: Եթե տարանջատում ենք դպրոցի տարբեր հատվածները՝ տարրական, միջին եւ ավագ, ապա պետք է մտածենք նաեւ հիմնական դպրոցը (9-րդ դասարան) ավարտածի սովորելու տեղի մասին: ՏԱՍԻՍ միջազգային ծրագրի հետ այսօր իրականացնում ենք զարգացման 5-ամյա ծրագիր եւ փորձելու ենք նախնական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների թիվը առաջիկա 3 տարվա ընթացքում կրկնապատկել: Մեր նպատակն է շարունակել բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստման գործընթացը՝ միաժամանակ պատրաստելով նաեւ միջին ու նախնական մասնագիտական կրթությամբ մասնագետներ: Դրա նպատակն այն է, որ շատ կարճ ժամանակում շրջանավարտը կարողանա ստանալ անհրաժեշտ կրթություն եւ աշխատի իր մասնագիտությամբ: Ընդ որում, երբեմն նա ավելի բարձր աշխատավարձ է ստանում, քան բարձրագույն կրթություն ունեցողը: Դրանով նաեւ համալսարանները, եթե կարելի է ասել, կբեռնաթափվեն: Իսկ եթե նրանցից որեւէ մեկը ցանկություն կունենա ստանալ բարձրագույն կրթություն, քավ լիցի, այդ հնարավորությունը նա ունի: Այսինքն՝ նախնական մասնագիտական հաստատությունն ավարտածը շատ հեշտ կարող է քոլեջում սովորել, քոլեջ ավարտածը կարող է առանց քննությունների սովորել բուհում... Այսինքն՝ գործելու է կրթության շարունակականության սկզբունքը: Ընդհանրապես, մենք մոռացել ենք մասնագիտական կողմնորոշման խնդիրը: Թեթեւակի վերլուծությունն անգամ ցույց է տալիս, որ հաճախ երեխային մղում ենք այս կամ այն մասնագիտության՝ առանց հաշվի առնելու նրա նախասիրությունները, աշխատաշուկան...

-Կրթական բարեփոխումների շրջանակներում իրականացվող բուհերի կառավարման նոր համակարգը միանշանակ չի ընդունվում: Հատկապես դա նկատվում է Երեւանի պետհամալսարանում:

-Ցանկացած երկիր պայմաններ է ստեղծում, որպեսզի բուհի կառավարմանը մասնակցեն գործատուներ, երկրի կառավարման համակարգի ներկայացուցիչներ, այսինքն՝ մարդիկ, ովքեր շահագրգռված են, որ բուհում պատրաստվեն ավելի որակյալ մասնագետներ: Օրինակ, Վիեննայի համալսարանի կառավարման խորհրդի 9 անդամներից եւ ոչ մեկը չի ներկայացնում տվյալ համալսարանը՝ սկսած խորհրդի նախագահից: Բայց այդ 9 անդամից 4-ին ընտրում է բուհը: Նախկին կառավարման համակարգում ստացվում էր փակ շղթա. բուհը կառավարում էին միայն բուհի աշխատակիցները, եւ մենք հաճախ տեղեկացված չէինք, թե այս կամ այն բուհում ինչ է կատարվում: Մենք այսուհետեւ ոչ միայն տեղեկացված ենք լինելու, այլեւ օգնելու ենք բուհին, որպեսզի այնտեղ ժամանակին համահունչ բարեփոխումներ իրականացվեն: Այսօրվա խորհրդում կան ե՛ւ բանկիրներ, ե՛ւ գործատուներ, ե՛ւ քաղաքական ու պետական գործիչներ, այսինքն՝ մարդիկ, ովքեր ի պաշտոնե կամ ոչ ի պաշտոնե այս կամ այն կերպ պետք է աջակցեն բուհի խնդիրների լուծմանը:

-Բայց որոշ համալսարաններ նշում են, որ բուհը դրանով իսկ զրկվում է ինքնուրույնությունից:

-Երեւի նրանք լավ չեն պատկերացնում կառավարման խորհրդի առաքելությունը, չգիտեն նրա գործառույթները: Խորհուրդը հաստատում է տարեկան բյուջեն, քննարկում բյուջեի արդյունքները, բուհի ռազմավարական ծրագիրը (եթե բուհն ունի նման ծրագիր) եւ ընտրում է ռեկտոր: Անտեղի է այն մտահոգությունը, որ բուհերի կառավարման խորհուրդը մասնակցելու է բուհի ամենօրյա կառավարմանը: Խորհրդի կողմից ընտրված ռեկտորը ձեւավորում է ռեկտորատ, գիտխորհուրդ, որոնք էլ իրականացնում են բուհի ինքնավարությունը, զարգացումը, ամենօրյա կառավարումը:

-Իսկ ընդհանրապես բուհերի պրոֆեսորադասախոսական անձնակազմը, ուսանողությունը պատրաստ են աշխատել ու սովորել նոր, հատկապես կրեդիտային համակարգի պայմաններում: Կոռուպցիոն ռիսկերը կնվազե՞ն, թե՞...

-Ձեր նշած կրեդիտային, ինչպես նաեւ երկաստիճան կրթական համակարգը նոր չի ներդրվում. այն փորձաշրջան է անցել 3 բուհերում (պետհամալսարան, ճարտարագիտական համալսարան եւ գյուղատնտեսական), պարզապես հիմա դրանք ցանկանում ենք դարձնել մեզ համար գործողության հիմնական ուղղություն: Այս տարի կրեդիտային համակարգը փորձարկում ենք 4 բուհում: Իսկ կոռուպցիոն ռիսկերը, ցանկացած խնդրի հետ կապված, չեն բացառվում, բայց կոնկրետ կրեդիտային համակարգի ներդրմամբ այդ ռիսկերը պակասում են: Եթե նախկին համակարգով հաճախ մեն-մենակ էին մնում դասախոսը, ուսանողն ու 12 էջանոց տետրում ամփոփված դասախոսությունը, ու դասախոսը երբեմն կամայական գնահատական կարող էր դնել, ապա հիմա դա բացառվելու է. ուսանողն ունենալու է էլեկտրոնային, սովորական դասագրքեր եւ դրանց համապատասխան է քննություն հանձնելու ու գնահատվելու: Ընդ որում, քննությունը լինելու է գրավոր, գործելու է թեստային համակարգը: Բացի այդ, դասախոսը պարտավոր է մինչեւ ուսանողից քննություն ընդունելը 7-8 պարամետրերով քննել նրան ամբողջ քննաշրջանի կամ ուսումնական տարվա ընթացքում, եւ այդ դեպքում շատ ավելի բարդ է «ընդհանուր լեզու» գտնելը: Կրեդիտային համակարգը կարող է հեղափոխություն առաջացնել մեր կրթական համակարգում, հեղափոխություն հանուն որակյալ գիտելիքների, հանուն համակարգի զարգացման ու միջազգային չափանիշների բավարարման:

-Անդրադառնանք գիտության ոլորտի բարեփոխումներին եւ ՄԱԿ-ի փորձագետների այն ուսումնասիրությանը, որը մեծ աղմուկ բարձրացրեց:

-Մեր նախարարությունը եթե ոչ ամեն օր, ապա պարբերաբար ստանում է կրթական ու գիտական բարեփոխումների վերաբերյալ տարբեր կարծիքներ, դիրքորոշումներ: Այդպիսի դիրքորոշումներից մեկն էլ ՄԱԿ-ի չորս փորձագետի կողմից իրականացված ուսումնասիրությունն էր, որն ի գիտություն ենք ընդունել: Նույն կերպ ենք վարվել նաեւ տարբեր հասարակական կազմակերպություններից ստացած կարծիքների հետ: Գիտական բարեփոխումներ իրականացնելու սկզբունք որդեգրելու համար պետք է ամբողջական կարծիքներ իմանանք դրա վերաբերյալ: Մի բան պարզ է. ընդհանրապես գիտության ասպարեզը ֆինանսավորման, կառուցվածքային փոփոխությունների հետ կապված բարեփոխումների կարիք ունի, բայց ես համոզված եմ, որ ցանկացած փոփոխություն պետք է իրականացվի հենց գիտնականների օգնությամբ:

-Իսկ նրանք առաջարկություններով հանդե՞ս են գալիս:

-Իհարկե: ԳԱԱ-ն ներկայացրել է առաջարկությունների փաթեթ, որը, կարծում եմ, առաջիկայում կքննարկվի, եւ մենք վերջնական որոշում կայացնելիս այդ փաթեթից չենք հեռանա: Բայց ես ավելի քան վստահ եմ, որ ակադեմիայի հարցը քննարկողներից շատերը ամենատարբեր պատճառներով դեռեւս չեն հասցրել կարդալ նույնիսկ այն, ինչ իրենք են ներկայացրել: Էլ չեմ խոսում ՄԱԿ-ի, այլ կազմակերպությունների առաջարկությունների մասին: Պարզապես մեկը հրապարակ է նետել իբր ՄԱԿ-ի ուսումնասիրությունների արդյունքում ակադեմիան փակելու գաղափարը: Դա անհեթեթություն է: Նման բան չկա: Մենք պետք է հնարավորն անենք որ գիտնականը ոչ թե 28 հազար դրամ, այլ մի քանի անգամ ավելի աշխատավարձ ստանա: Այդ նպատակն իրականացնելու համար կա երկու զուգահեռ ճանապարհ. պետության կողմից ֆինանսական միջոցների ավելացում եւ այդ միջոցների արդյունավետ ծախսում: Իսկ փոփոխությունները պետք է լինեն կշռադատված, գիտնականների սրտից բխող: Գիտնականը չպետք է խռովի մեր նախարարությունից կամ ԳԱԱ-ից: Նա պետք է հավատա բարեփոխումների արդյունավետությանն ու վերջնական արդյունքին: Գիտնականը պետք է վաստակած, բավարարված լինի իր կատարած աշխատանքով ու ստացած արդյունքով, վաստակով ու աշխատավարձով:

Ռ. ԹԱԹՈՅԱՆ